

Արձանագրություն թիվ 1

2019 թվականի սեպտեմբերի 6 -ին ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 5-րդ <<Ա>> դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները ,դասղեկ Լիանա Տերյանը, տնօրենի մասնագիտագլված կրթական աջկցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

Օրակարգում`

- 1.2019-2020 ուստարվա խնդիրներն ու անելիքները և դասարանի ծնողխորհրդի նախագահի և անդամների ընտրության հարցը:
2. Դասագրքերի վարձավճարները, դրանց հավաքագրումն ու հանձնումը:
3. Ընթացիկ հարցեր(կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն):

1. Լսեցին- .2019-2020 ուստարվա խնդիրներն ու անելիքները և դասարանի ծնողխորհրդի նախագահի և անդամների ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ`Լիանա Տերյանը, ով ներկայացրեց 2018-2019 ուստարում 5-րդ <<Ա>> դասարանի կատարած աշխատանքները և ներկայացրեց նոր` 2019-2020 ուստարվա խնդիրներն ու անելիքները: Լիանա Տերյանը նշեց , որ չորրորդ դասարանից հետո աշակերտները 5-րդ դասարանում անցնելու են նոր առարկաներ, նոր պահանջներ են դրվելու նրանց առջև: Նոր ուսումնական տարվա ընթացքում աշխատել ուսուցիչ-աշակերտ-ծնող կապի միջոցով: Նոր ուսումնական տարվա համար ձևավորել ծնողական խորհուրդ:

Որոշեցին.

- 1.Նախագահի թեկնածու առաջադրել և վերահաստատել Վեհանուշ Բաղայանին,
- 2.Թեհմինե Անտոնյան / անդամ/
3. Շահանե Հարությունյան /անդամ/
4. Սիրանուշ Բարսեղյան /անդամ/
5. Անի Գալստյան /անդամ/

2.Լսեցին.- Դասագրքերի վարձավճարները, դրանց հավաքագրումն ու հանձնումը: Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:

Դասղեկ՝ Լիանա Տերյանը նշեց, որ ծնողները, մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության հիմնախնդիրների հարցում: Դասղեկը հորդորեց ծնողներին՝ սերտ կապ պահպանել ուսուցիչների և դպրոցի հետ, ինչը կխթանի ճիշտ ու արդյունավետ կազմակերպել սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը: Ուսուցիչներին և դասղեկին օգնել ձեռք բերել անհրաժեշտ գրենական պիտույքներ, նշված ժամկետում սկսել և ավարտել դասագրքերի վարձավճարները: Դասղեկը ներկայացրեց, որ դասագրքերի վարձավճարները ,հավաքագրումն ու հանձնումը գրադարանավարուհուն՝ կատարվում է ծնողական խորհրդի նախագահի և անդամների միջոցով:

Որոշեցին.

Օգնել դասղեկին և ուսուցիչներին՝ ձեռք բերելու անհրաժեշտ տետրեր և գրենական պիտույքներ, կազմակերպված իրականացնել դասագրքերի վարձավճարների հավաքագրումը: Դասագրքերի վարձավճարների հավաքագրումն ու հանձնումը կատարել ժամանակին՝ համապատասխան ցուցակով:

3. Լսեցին. - Ընթացիկ հարցեր/կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

Դասղեկ՝ Լիանա Տերյանը նշեց ,որ նոր ուսումնական տարում դպրոցը աշխատելու է հնգօրյա ռեժիմով /9-00--15-00/: Նա հորդորեց ծնողներին՝ հետևել իրենց երեխաներին հավուր պատշաճի հաճախեն դպրոց: Պահել ծնող-դասղեկ կապը և անհրաժեշտության դեպքում՝ այցելել դպրոց՝ երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.

Հաշվի առնելով , որ սովորողները փոխադրվել են հինգերորդ դասարան ,ավելի ուշադիր լինել նրանց նկատմամբ, պահել դասղեկ- աշակերտ – ծնող կապը, վերահսկել նրանց հաճախումներն ու կարգապահությունը:

Ծնողական խորհրդի նախագահ՝
Քարտուղար՝

/Բաղայան Վեհանուշ/
/Գալստյան Անի/